ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 8-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի ԹԻՎ 1-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում կատարված կազմհաստիքային փոփոխությունների կապակցությամբ, համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018թ. հունիսի 11-ի «ՀՀ ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 751-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի 8-րդ ենթակետի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատարի 2020 թվականի հունվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումների փաստաթղթաշրջանառության ելքի ինդեքսները հաստատելու, փաստաթղթաշրջանառության առանձնահատկությունները կանոնակարգելու մասին» թիվ 1-Լ հրամանով հաստատված հավելվածի 91-րդ կետը լրացնել նոր ենթակետերով՝ հետևյալ խմբագրությամբ՝

«ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության Շիրակի մարզի գումարտակ 91/2»:

«ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության Լոռու մարզի գումարտակ 91/3»:

2. Հրամանն ուժի մեջ է մտնում ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության Շիրակի մարզի և Լոռու մարզի գումարտակների գործարկման պահից:

3. Հրամանը ծանոթացնել ՀՀ ոստիկանության իրավասու ծառայողներին /աշխատողներին/:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ **Վ. ՂԱՋԱՐՅԱՆ**

«16» 03 2022թ.

ք.Երևան